

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мпакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաւանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ք օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒՄ

Զգուշացում թէ իրագործում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Բալթիանիից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զրատիկ նաւեր. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՊԵՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Բոլղարիայից:

ԶԳՏՈՒՄ ԹԵ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Խաղաղութեան կոնֆերանսի ծրագիրը մշակված է: Հայաստանի Հասարակական ընտրված է իբրև կոնֆերանսի նիստերի տեղ: Պետութիւնների կողմից նիստերին մասնակցելու նշանակված են հեղինակաւոր անձինք, որոնք կամ պատկառելի պետական գործունէութիւն են ունեցել, կամ զինված են գիտական պատաստութեամբ: Հասարակ կոնֆերանսի անդամները կազմակերպելու համար գործին վերաբերելու անցելու փորձերի արդիւնները, կը լուծի մի քանի ընթացիկ կարևոր խնդիրներ, որոնք վերաբերում են միջազգային դատաւարութեան և պետութիւնների գործակցութեան և այնուհետև կը խորհրդակցելու ապագայ կոնֆերանսների կազմակերպութեան մասին:

Անկասկած, կոնֆերանսի կը ցոյց տայ ամենամեծ համալրութիւն գէպի խաղաղութեան գաղափարը և պետական ներկայացուցիչների բերանով կը յայտնէ, որ խաղաղութիւնը կազմում է եւրոպական պետութիւնների տնտեսը և նրանց քաղաքականութեան ուղեցոյցը: Սակայն հարցը այդ համալրութեան արտայայտութեան մէջ չը պէտք է լինի, այլ այն գործնական միջոցներով մէջ, որ նա պէտք է տայ եւրոպական կնճառ խնդիրները լուծելու և միջազգային ընդհարումները վերացնելու նպատակով:

Պետութիւններից ոչ ոք չէ ուրանում և չէ կարող համարձակվել ուրանալու խաղաղութեան բարձր գաղափարը. բայց գործնականապէս նրանցից իւրաքանչիւրը պէտք է հող պատրաստէ խաղաղութեան գաղափարի յաղթանակի համար, աչքի առնալ ունենալով, որ անհրաժեշտ է պատճառները ուղղացնել, որպէս զի և հետևանքը ունշանայ: Պրիմատ-դոցենտ Գես-

լեր նորերս Պետերբուրգում կարգաց մի հրապարակական դասախօսութիւն «յաւի-տենական խաղաղութեան» մասին և մի շարք պատմական փաստերով ապացուցեց, որ խաղաղութեան գաղափարը ծնվել է շատ վաղուց և նա զբաղեցրել է այնպիսի փիլիսոփաների և գրողների, ինչպէս են Պլատոն, Հորացիոս, Վիրգիլիոս, Օվիդիոս, այդ գաղափարը գտել է իր ամենամեծ արտայայտութիւնը և պսակը Քրիստոսի աւետարանի մէջ, որ նա ոգևորել է եւրոպական այնպիսի վեհագետների մտածողների, ինչպէս են Հենրիխ IV, Սենտ-Իլեր, Լայբնից, Վոլտեր և ուրիշներ. և սակայն եւրոպան այսօր էլ, ինչպէս և առաջ, կանգնած է մշտական զինուորման և պատերազմական պատրաստութիւնների առաջ: Եւրոպական ազգերը միայն խաղաղութիւն են ցանկանում, լաւագոյն գրողները և հասարակական գործողները սարսափում են պատերազմի աւերիչ և բարոյապէս փչացող ազդեցութիւնից, պատերազմական ծախսերը այնպիսի ծանրութիւն են բարձր ժողովրդների վրա, որ իւրաքանչիւր ազգ չը գիտէ ինչ հնար մտածէ այդ ծանրութիւնից ազատելու համար: Խաղաղութեան, յաւիտենական խաղաղութեան գաղափարը ընդհանուր տեսանքն է և կոնֆերանսի, որ պէտք է գումարվի, պէտք է համոզված լինի, որ խաղաղութիւնը գործնականապէս ապահովելու ամեն մի քայլը կընդունվի ազգերի մասնաների կողմից ամենամեծ երախտաբարութեամբ:

Սակայն ամենամեծ դժուարութիւնը հենց այդ իրագործութեան մէջն է: Ինչպէս որ այժմ խաղաղութիւնը պահպանվում է զօրքերի միջոցով, այնպէս և միջազգային խորհրդակցութիւնները աշխատում են իւրաքանչիւր պետութեան ձայնը համապատասխան կերպով լսելի անել: Անշուշտ այդպիսով խնդիրներ չեն կարող լուծվել, որովհետև ժողովուրդների կարիքները այդպիսով բաւարարութիւն չեն ստանալ և երաժ տանջանքները չեն դադարի տանջանքներ մնալուց: Միայն այն խորհրդակցութիւնները և ժողովները կարող են արդիւնաւոր հետևանքներ ծնել, որոնք կը պարտաւորեն ազգերին և պետութիւններին յարգել ժողովուրդների հիմնական շահերը և պահանջները, կը վերացնեն զրկանքը և դժգոհութեան

պատճառները և կը խաղաղացնեն մարդկանց մտքերը:

Ցանկալի է, որ առաջիկայ կոնֆերանսի խաղաղութեան աջող սկիզբ լինել ապագայ կոնֆերանսների համար և այդպիսով պսակել այն բարձր գաղափարը, որ ամբողջութեամբ է խաղաղութիւն բառի մէջ ընդարձակ հասկացողութեամբ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍՈՒԼ

Որքան էլ կորած և մոռացված լինի մեր գաւառը, որքան էլ մեր մէջ սաստիկ լինի անտարբերութիւնը դէպի մեր «կրտսեր եղբայրները» և դէպի նրանց ուսմական իրականութիւնը, մի մի անգամ մեր ականջին են հասնում կատարելապէս սոսկալի փաստեր: Իշխան Երիվոյ մի քանի տողով հետևել պատկերն է նկարում «Тифлис. Известия» լրագրում:

Գործ. գաւառի Գոսի գիւղում, որ բաղկացած է 250 ծխից, մի ամսից աւել է ինչ ընդին են գրել մանկական համաճարակ հիւանդութիւններ, ամեն օր գերեզման տանելով մի մի, իսկ երբեմն նաև երկու երեխաներ: Երկու բնամայր կորցրել են իրանց բոլոր երեխաներին. մէկը կորցրել է երեք երեխայ, իսկ մի այլը—չորս երեխաներից երեքին: Զը կայ համարեա մի հատ ընտանիք, ուր չը հիւանդանային երեխաները և որը գոնէ մի երեխայ կորցրած չը լինի:

Եւ Բեթլեհեմի այս քաղաք տեղի ունի գաւառական քաղաքից մի ժամ ճանապարհի վրա գտնվող մի գիւղում. մի քիչ հեռու լինել նա, մի քիչ դժուար մատչելի տեղում, լեռների, կիրճերի մէջ, ձիւների և անտառների մէջ թաղված—և այդ կոտորածի մասին նոյն իսկ լուր էլ չէր հասնի նրանց, որոնք առաւօտեան լրագրի վերջնեկա խնդրի օպերետային ներկայացումների ընդհանրանքն են կարողում յափշտակել: Երբեք և բեթլեհեմ վեր են թաղում հեգնուրէն, երբ ուսմական պատմութիւններ են տեսնում: Սթէ դժբախտ գիւղը այդքան մօտիկ չը լինէր քաղաքին, դոցէ չը գտնվէր մի բարի մարդ, որ երկու խօսք դէք լրագրում: Նշխան Երիվոյով պարտ է համարել ուշադրութիւն հրահրել, քանի որ, «սակաւակ դէպքում, մեր գիւղում մի հատ կենդանի երեխայ չի մնայ», աւսում է նա: Հասկանալի է. մի հատ անգամ...

Մեր ընթերցողները, անկասկած, ապշած մնացին, կարգաւով «Մշակ» № 49-ի մէջ տպած

որն աշխուճար և անձնութեամբ օգնում էր. բայց անթիւ են նրանք, որոնք պատեհութիւնից օգուտ քաղելով իրանց շահի համար ստեղծ, խաբելով, խաղաղութեան, գողանալով մեծ ճարտարութիւն և մեծ իմաստութիւն էին համարում: Թող ուրիշները գովեն, փառաբանեն որքան որ կուզեն, թող ինձանից նեղանան և հայոյն, բայց ես պատեհութիւն ունէի շատ ստախոսներ, խաբեբաներ և անաւանդ շատ կեղծաւոր աղգասէրներ ճանաչելու:

Փարիսեցիները ոչ միայն կրօնի մէջ են լինում, այլ փարիսեցի աղգասէրները իրանց յատուկ ոճերով ու ֆրազներով այնչափ զգուշ են, որքան աւետարանում նկարագրված նրանց եղբայրներն են: Այս վերջին աղէտը, որ եկաւ մեր գիւղին, պէտք է ասել մի պատմական ընդհանրութիւն (историческая ревизия) էր, որ ցոյց տուց թէ մեր, հայերիս, բարոյական դրամապոյիս որքան էր: Անուրանալի է, որ տեղեր եղան, որ ուսիկ և աւելի թանգագին յատկութիւններ երեւան եղան, բայց այստեղ շատ պղնձ, երկաթ և նոյն իսկ ցին տեսանք: Սթէ այն լաւ, քաջ, ազնիւ և բարձրագի օրինակներ չը լինէին, իբրաւ պէտք էր հարցնել, թէ արեւօք սքանչ են, որ մեծ քանիք են պահանջում Սակայն, բարեբաղդաբար, այս պէտք է ասել, որ Թիւրքիայից Բոլղարիա գաղթած հայերը և, մանաւանդ Վառնա և Բուրգաս եկողները Վ. Պոլսի փրփուրն էին, և չենք սխալվի, եթէ ասենք թէ ինքը, Վ. Պոլսը, զեռ հայ ազգի լաւ մասը չէ ներկայաց-

«Վախառութիւնը Արաքսալաքի գաւառում յօդածը: Կովկասեան գաւառներից մէկում վախառական տոկոսը ժողովրդի մէջ կապված է «կրակ» բառի հետ: Մենք գիտենք, որ ժողովուրդն է ստեղծում առարկաների, հասկացողութիւնների, յատկութիւնների անունները իր դարաւոր փորձերի օգնութեամբ. և պէտք է խոստովանել, որ ժողովրդական հանճարը շատ զեղեցիկ կերպով է բնորոշել տոկոսի յատկութիւնը, կայնելով նրան «կրակ» բառը: Կրակ—նա այրում է, փոթոթում. իսկ երբ բաւական նիւթեր է գտնում, սկսում է բոցավառվել, լափել ամեն ինչ, մոխիր դարձնել: Եւ ճիշդ նոյն գործողութիւնները կատարում է վախառական տոկոսը մեր գիւղական տնտեսութեան մէջ: Արաքսալաքի գաւառի մի անշնան մասից վերջրած տանեակ փաստերը շատ լաւ պատկերացնում են այդ անտեսանելի հրդեհը, որին մատնված է գիւղացին, տկուր մարմին և կորացած գլուխ ունեցող գիւղացին: Նոյն այդ գաւառի մէջ տարածված վախառական մասին խօսում է նաև պ. Լ. Ղուկասեան «Кавказское Сельское Хозяйство» շաբաթաթերթի մէջ:

Վերջին տարու տարիներում Արաքսալաքի գաւառի գիւղացիները մեծ պարտքերի մէջ ընկան. գիւղական տան և մէկ հասարակութիւններից միայն մէկը, Սպասոկոէ, չուսի պարտք. իսկ մնացած 10 հասարակութիւնների գիւղացիները պարտական են մուրհակներով և ձեռագագերով 1,103,187 ռուբլի: Միջին թիւով իւրաքանչիւր գիւղական ծխի վրա ընկնում է պարտք 170 ռուբլի, իսկ տոկոսները—34 ռուբլի. դա աւելի քան 1/3 անգամ գերազանցում է պետական, զեմստվոյի և հասարակական տուրքերի գումարին:

Այս թէ ինչ տեսակ ժողովրդական լուծի տակ է հեծում մեր ժողովուրդը: Բայց մենք միջին դարերում չենք ապրում, երբ մոնղոլական լուծը բացարձակ էր, որը ցերեկով: Վախառութիւնը պատժող խիստ օրէնքներ կան մեր երկրում: Պ. Ղուկասեան էլ, իրաւացի կերպով դարձանալով, որ այդ խիստ օրէնքների հետ դարձեալ դոյութիւն ունի ամենամասնավոր վախառութիւնը, ինքն էլ գիւղացիներին և ամեն տեղ մի և նոյն պատասխանն է ստացել:

Եթէ ես գանգառվեմ նրա (վախառութիւն) դէմ—ասում է գիւղացին—դրանից ոչինչ չի դուրս գալ. նա ուժեղ մարդ է և հարուստ, կարող է փաստաբաններ հրաւիրել, որոնք կիմանան արդարացիութիւնը, և այն ժամանակ մենք չենք ազատվի նրա ձեռքից: Եւ ինչպէս ես, մի անգամայն մարդ, դատ վարեմ նրա դէմ: Միւս կողմից, ում պիտի դիմեմ ես կարելի ժամանակ: Նա թէ և մեծ տոկոսներ է վերցնում, բայց էլի ցաւին ճար

նում: Սա է մեր միակ միջոցաւորութիւնը, որ հայերի լաւերը և աղէկները ուրիշ տեղերումն էին, բայց մեր ժողովուրդի տոկոսներն էին: Սակայն, նոյն իսկ այդ թշուառացած և արժատախիլ եղած մասնաւոր անձանց և ընտանիքների մէջ աղամանդներ էլ հանդիպելի, և միշտ մտածում էի թէ քանի որ հայութեան ստորին մասի մէջ անգամ այսպիսի օրինակներ են գտնվում, նա չէ կարող ոտնակոխ լինել:

Ինչ կերպ էլ խորհելու լինենք, մի տխուր երևոյթ կայ, որ չէ կարելի ուրանալ, և դա այն անտարբերութիւնն է, որին դատապարտված էր Բոլղարիայի հայ գաղթականութիւնը թէ հայ հոգևորականութեան, թէ հայ խորհուրդների կողմից: Զը գտնվեցին արեւօք այս նեղ ու դառն ժամանակին հայ կենտրոններում անձինք, որ իբրև միջոցաւոր կամ լուսաբեր խաղաղութիւն մասնաւոր գաղթին այս և ուրիշ գաղթականները և իրանց այցելութեամբ պահէին խեղճներն յուսահատութիւնից: Ափսոս, ի դուր սպասեցիք մի այդպիսի միջոցաւոր երևոյթի: Այդպիսի մի երկու-երեք միջոցաւոր չհոգևորական թէ ուսումնական, աշխարհական սոսկ իրանց մեր մէջ երևալով ու իրանց սփռվիլ ու ցաւակցական և յուսադրելի խօսքերով ինչ հաշտեցնել ասես, որ չէին կարող անել: Բայց հիմա էլ դեռ ու չէ: Դր. Լ. Կարսի, դր. Բեդէքէ, Լոսան, Լեւոն, Բոյէ, Պուզար և մի քանի ուրիշներ եկան այստեղ Անդրկայից, Գերմանիայից և Ֆրանսիայից, և ոչ թէ միայն սրտառու խօսքեր բերին, որ իբրաւ շատ կար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԲՈԼՂԱՐԻԱՅԻՑ

Վառնա, մարտի 5-ին

Վաղուց է, որ «Մշակ» մէջ Բոլղարիայից լուր չը կայ, և խիղճս ինձ միշտ տանջում է, թէ ես՝ որ սիրում եմ ամեն կողմից եկած նամակագրութիւնները «Մշակում» կարգաւ պէտք էջ որ ուրիշ ինձպէս հետաքրքրվողներին տեղեկութիւն տալի թէ այստեղ մեր հայերիս վիճակը ինչպէս է: Եթէ ասեմ թէ շատ զբաղված եմ և թղթակցելու ժամանակ չէ մնում, դա սխալ չէ, բայց լինաւ որ պատճառը մէկ շնորհով բան չը լինէր: Եւ որ մարդ ոգևորված հաղորդէ: Ուր որ նայում եմ լեռում, տրտմութիւն, յուսահատութիւն, ոչ մի գաղափար և ոչ մի իղէալ չէ երեւում:

Մեր Վառնայում երեք լրագրի է հրատարակվում. խնդրելու ուղում են նոր բան ասել, չահարգուել, զբաղեցնել, բայց ոչինչ չէ աղողվում. ոչ միջոց, ոչ աղաչանք, ոչ փաստաբանութիւն, ոչ ճարտասանական դարձուածները, ոչ սպանալիքը, ոչ մատնութիւնը և ոչ շողորորութիւնը ոչինչ օգուտ չեն բերում: Մարդիկ կարողում են լրագրիները, որովհետև կարողաւ սովոր են, բայց կարգացածից մի նոր միտք, մի

նոր գաղափար, մի նոր ոգևորութիւն չեն ստանում: Մարդկանց սրտերը պաղ են: Բայց միայն սրտերը չեն պաղ, պաղ է և լրագրութիւնը: Լրագրութիւնը ինքը պէտք է վառված, բռնկված լինի, որ ուրիշին էլ կարողանայ տաքացնել, վառել: Թող ինձ ներքին մեր յարգելի խմբագիրները, որ ասեմ իմ խնամք կարծիքը, եթէ այդ պարտնենք հացի մի ուրիշ, աւելի փափուկ կտոր գտնեն, այս բոսկին թուղթ ու թանաք կը ծախեն, պատից կը կախեն ու կը վաղեն աւելի զահաւոր փնջակին:

Այդ լրագիրների տուած մի հատիկ օգուտը, իմ կարծիքով, այն է, որ թող չեն տալիս հայերէն կարգալ իմացողներին մոռանալ այդ ընթերցանութիւնը: Բայց այդ մի ջնջին օգուտը դէմ տալիս են մեզ մեծ-մեծ վնասներ: Տեսէք ինչ խնդիրներ, ինչ անձնական կծու դիտողութիւններ, ինչ թուաւոր կեղծաւորութեան տակ զբոլված աւելութիւն և այդ տեսակ ուրիշ մոլութիւններ կան դրանց մէջ:

Իսկ հայ ժողովրդի մասին ինչ ասենք: Դա երկու մասից է բաղկացած. մէկը տեղացի, որ ունի իր պայմանական սովորութիւնները և անաւորութիւնները, որոնցից մի մաղի չափ չեղելու միտք չունի: Եւ գաղթականութեան մեծ հոսանքը, որ թափվեց Բոլղարիա, նրանց վրա ամենաշինն տպաւորութիւն անգամ չը թողեց: Եթէ կային մի քանի անձինք, որ խեղճ թափառական հայ եղբայրներին իբրև մարդ ցաւակցեցին,—ես միմիայն մէկ հատիկ անձ ճանաչեցի,

անում է. այդքանի համար էլ չնորհակալ ենք նրանից:

Համաձայնվեցե՛ք, օրէնքը այսպիսի դէպքերում պէտք է միանգամայն անդօր մնայ: Ներկայ տոկոսի լուծը մոնօպոլանից էլ վատ է, քանի որ ժողովուրդը իր կամքովն է նրան ենթարկվում: Այդպէս է ամեն տեղ. Ախալքալաքի գաւառը բացառութեան պէս մի բան է երևում ընդ այն պատճառով, որ թւանշաններով, փաստերով լուսաբանված է Տրէշաւոր երևոյթը: Թող միւս գաւառները, մասնաւոր ի բնէ աղբաւորները (օրինակ Զանգեզուր), նոյնպէս փաստեր ու թւեր հանեն, և պարզ կը լինի, որ Ախալքալաքի գաւառի գիւղացին չէ կարող ստել թէ իր գերութիւնն է ամենից դառն, անտանելին:

ՆԱՄԱԿ ԲԱԼԱՍԹՆԻՑ

Մարտի 15-ին

Ով փոքր ի շատէ ծանօթ է առևտրական աշխարհին, նա գիտէ, որ առևտրական խոշոր արդիւնաբերութեան աղբիւրները անցած են և այժմ էլ անցնում են ակցիոներական ընկերութիւնների ձեռքը: Ներօպացիւները շատ վաղուց են ըմբռնել հաւաքական ոյժերով գործելու նըշանակութիւնը: և դա ունի իր մեծ հիմքերը: Նախ որ՝ խոշոր արդիւնաբերական գործեր սկսելը մեծ կապիտալի կարիք ունի, և երկրորդ՝ որ այդպիսի մեծ բիւսկ պահանջող ձեռնարկութիւնը ընկերական ուժով տանելը աւելի հեշտ է լինում: Մենք, կովկասցիներն էլ, դպարով ընկերական ուժով գործելու անհրաժեշտութիւնը, հետևում ենք օտարերկրացիներին: Վերջերս մեր նաւթային աշխարհում էլ սկսեցին կազմվել մի քանի ընկերութիւններ:

Բայց մի հարց: Ինչպէս ենք հետևում օտարերկրացիներին: Ներօպացում կազմվում են ընկերութիւններ որոշ գրաւազրկով, հաստատում են ընկերութեան պարզ ու որոշ կանոններ, գործի ղեկավար է ընտրվում, բոլոր ընկերների հաւանութեամբ, մի հետև, փորձառու, առևտրական աշխարհի մօտ ծանօթ, հասարակութեան մէջ թէ՛ զիրքով և թէ՛ վարք ու բարքով ազնիւ, մաքուր անուն վաստակած մարդը, որը գործի գլուխ անցնելով, անաչառութեամբ առաջ է տանում իր ստանձնած ոլաշտոնը, և, մեր կարծիքով, զլլաւորապէս այդ պատճառով է, որ ուրիշ երկիրներում այդպիսի ընկերութիւնները գոյութիւն են ունենում հարկւրաւոր տարրերի և տալիս են իրանց ցանկալի արդիւնքը: Բայց ինչպէս են կազմվում մեր ընկերութիւնները և ինչ եղանակով են առաջ ընթանում: Երբ է մեր այն ընկերութիւնը, որը գոյութիւն ունենար մի քանի տասնեակ տարիներ: Ինչու համար է, որ մեր աչքերի առջև աշխարհի ամեն կողմերից կապիտալիստներ են ժողովում մեր երկիրը, և մեր բերանի պատառը մեր ձեռքից խլում: Միթէ մեղանում պակասում է կապիտալը: Ոչ: Մեղանում կապիտալը կայ, բայց, բացի նրանից որ պակասում է ուսումը, դարգացողութիւնը, կապիտալի գործադրութեան ձրբը, շատ ժամանակ մեր ընկերութեամբ սկսած գործերն էլ ծուռ ճանապարհով են գնում:

Մէր, այլ նաև փոքր ի շատէ էլ նպատա: Բոլորաբայի հայ դաղթականութեան այժմեան վիճակը կարելի է արդէն վերելը դրածից մասամբ երևակայել, բայց մասամբ էլ պէտք է խօսքով ասել, լրացնել: Գաղթականների մի մեծ մասը յետ է դարձել, բայց իմ կարծիքով, կէտ կամ կէսից աւելին տակալին մնացել է այստեղ ու միտք էլ չունի դառնալու: Առաջ արհեստաւորները իրար բերանից հաղը խլում էին, բայց հիմա, որ նրանցից շատերը գնացել են, մնացածները իրանց ապրուստը շատ թէ՛ ընդ գտնում են, մասնաւոր որ հայերը արհեստի մասին, ինչպէս որ բոլորներն իրանք էլ համարձակ խոստովանում են, տեղացիներից շատ գերազանց են: Նպատակ պէտք է շատ քաջացել է, եթէ չստանք բոլորովին անհետացել է: Բայց կան ուրիշ պէտքեր, որոնք անհրաժեշտ են և որոնց մասին մտածող չը կայ: Նա ասեմ իմ համոզմունքս ու փափագս, թող ինչ որ կը լինի կը լինի:

Նախ և առաջ պէտք է այստեղ մի գիտնական մանկավարժ, որ հայաբնակ քաղաքները, ուր որ դպրոցներ կան, անպատշաճ կերպով այցելէ և սիրով ու համակրանքով, առանց խէթի ու նախապաշարի, եղած ուսուցչական ոյժերը քաջաբեր ու խորհուրդներով լուսաւորէ: Գուցէ կարողանայ նաև հայ անհատների համակրութիւնը շահելով՝ միջոցներ էլ բերել տալ՝ տեղաւոր դպրոցներին նպաստելու: Այստեղ, Վառնա, հայ դաղթական վարժապետներ դպրոցներ են բացել, և գրեթէ սոված են մնում: Բացված

Անա մի ընկերութիւն, որը փայլուն ապագայ էր խոստանում: Մի քանի ամսից յետոյ լուծ էր, որ գործերը շատ վատ են գնում, ընկերները գործի վատ ընթացքից յուսահատված, վախենալով որ կը վնասվեն, վերցնում են ու թանգ—է՛ժան՝ իրանց բաժինները ծախում: Բայց մի քանի ամսից յետոյ, ով հրաշք, այն բաժինները, որոնք զանազան մակերևների միջոցով ծախված էին զանազան մարդկանց, այժմ մեծ մասը գտնվում են այն պարոններին ձեռքում, որոնք սկզբից մինչև վերջը գործը կառավարելիս միշտ վնաս էին ցոյց տալիս: Այն ինչ, այժմ գործը դարձեալ շատ աշոգակ է:

Մի ուրիշ տեղ գործի աշոգ ընթացքը տեսնելով, կարդալիքի անդամները ըրի՛ր ու պուռնոգ պետութիւնների մէջ՝ հենց իրանց պրօֆեսորի և նրա աշխատակիցների ղեկավարութեամբ 1900 թւին պրօֆեսոր Պետրի իր ուսանողներով մտադրութիւն ունի այցելել Պարիզի ցուցահանդէսը:

Առանց մեր խօսքը երկարելու, մենք կասենք, որ ընկերութեան յարատեւութեան ամենամեծ գրաւականներից մէկը գործավարի անաչառութիւնն է: Եթէ գործավարը ազնիւ և գործունեալ անձնատուրութիւն է, եթէ իր ընկերների վստահութիւնն ու սէրն է վայելում, անկասկած գործն էլ լաւ ապագայ կունենայ: Ուրիշ բան է՝ եթէ ամեն մարդ իր զրպանի հոգին է քաշում և իր ընկերների շահը բոլորովին աչքի առաջ չունենալով, գործին վնասում է:

Մի կողմից անդիական ֆերմաները մեր երկրի ընդարձակ նաւթահանքերն են ձեռք գցում, մի կողմից գերմանական մի քանի ֆերմաներ մեր պղնձահանքերին և այլ արդիւնաբերական կէտերին են տիրել, իսկ միւս կողմից ֆրանսիական մի ընկերութիւն իր ներկայացուցիչներն է ուղարկել մեր երկիրը՝ կառավարութեան հետ բանակցելու, որ ժողովրդի է տասն միլիոն դրամադրկով Բագու, Սուրխանին և Բալխանին միացնել էլեքտրական տրամվայով:

Ժամանակը հայելու պէս մեր առաջ պատկերացնում է չինական անշարժութեան և Սարգսյանապետան օգնաւորութեան հետևանքները: Մեր հարուստները պէտք է լաւ իմանան այն ճշմարտութիւնը, որ գոյութեան կուր մէջ յետ չը մնալու համար, բաւական չէ յոյս կապել ունեցած կապիտալի վրա և ձեռքերը ծալած նըստել, հարկաւոր է ձեռք բերել և ուսում, գիւտութիւն, լուրջ շրջահայեցողութիւն, հեռատեսութիւն և ձգտումն զէպի առաջադիմութիւն:

Թալիշ Տէր-Յովնան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Մեզ հաղորդում են, որ հողաչափների մի խումբ ճանապարհ է ընկել Սդնախի գաւառի տափարակը չափելու և հետազոտելու նպատակով: Այդ տափարակի մի մասը, որ կրում է Չաթմա անունը, արդէն հետազոտված է անցնել տարի, այժմ պէտք է հետազոտվի նրա միւս մասը: Ինչպէս Չաթմայում, նոյնպէս և այս մասում կան նաւթի նշաններ և արդէն մի քանի հարկուր յայտարարութիւններ են տրված այդ մասի հողերի համար:

Ներքից գատ գուցէ այդ մանկավարժը նորին էլ բանալ, որովհետեւ թէ երեխաներ և թէ ուսուցիչներ կան, բայց չը կայ ոչ միջոց, ոչ եււանդ: Նուանը և բուռն միջոց էլ այն դիւնական մանկավարժը պիտի բերէ:

Երկրորդ՝ պէտք է մի քաջաբեր, բանիմաց և փորձառու հրապարակախօս, որ մի տարի այստեղ մնալով՝ մեզ մի քիչ օդի, մի քիչ յոյս, մի քիչ լոյս և միտք տալ: Միթէ չը գիտենք, թէ ինչ սարսափելի բան է մարդը, երբ մնում է առանց մտքի և առանց յոյսի: Նայեցե՛ք, կաղաչեմ, ինչպէս խեղճ, բազմակողմանի ու խոր հայեցողած են ունեցել Նոր-Նախիճանը ընտրող հայ դաղթականները: Թէ Աղովի ծովը, թէ քաղաքի դիրքը, թէ Գոն գետը, թէ եղանակը և թէ միւս յարմարութիւնները ստեղծել են այդ հայ քաղաքը և նրան հայ պահել մինչև այսօր:

Բացի սրանցից, մի ընկերութեան կարծու եղք, որ ակցիոներով այստեղ, Բոլորաբայում՝ մի գործ սկսել: Մի կէս տարի է, որ Անդրկասից մի ընկերութիւն եկաւ Վառնա և այստեղ հայ էժան ձեռքեր գտնելով՝ մի բաժնակի գործարան հիմնեց: Հայ դրամապրոլը կարող էր այս գործին ինքը ձեռնարկել: Հիմա Բոլորաբայում մի շատ հետաքրքրական պատմական երևոյթ կայ: Չորս կամ հինգ հարկուր տարի սրանից առաջ այս երկիրը եղող թիւրք ցեղը, հիմա ինքն իրան ընկճված գաղալով՝ թողնում է իր յօժար կամքով Բոլորաբան և յետ դառնում նոյն ճանապարհով, որով որ եկել էր: Վառնա նաւահանգիստ է և ամեն կերակի օր, երբ չուգե-

«Բաբաշ» լրագրին Պետերբուրգից հեռագրում են, որ ներքին գործերի մինիստրութեան մէջ հարց է յարուցված փոխելու Կովկասում ներկայումս գործադրվող քաղաքային կանոնադրութիւնը՝ համապատասխան փորձի ցուցմունքների և տեղական կեանքի պայմաններին:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ժողովրդական լուստարութեան մինիստրութիւնը թոյլատրեց պրօֆեսոր Պետրին 1899 և 1900 թւերի արձակուրդներին աշխարհագրութեան ուսանողների հետ էկզկուրսիաներ կազմակերպել զէպի արևմտեան Ներօպա: Այդ էկզկուրսիաների նպատակը կը լինի տեսնել թանգարաններ և ժողովածուներ Արևմտեան Ներօպայի գլխաւոր պետութիւնների մէջ՝ հենց իրանց պրօֆեսորի և նրա աշխատակիցների ղեկավարութեամբ 1900 թւին պրօֆեսոր Պետրի իր ուսանողներով մտադրութիւն ունի այցելել Պարիզի ցուցահանդէսը:

«Русск. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ Տոյստօի «Воскресенье» վէպի բովանդակութիւնը, մաս մաս մամուլի մէջ երևալուն պէս, հեռագրով կը հաղորդվի անդիական և ամէրիկական լրագիրներին:

«Новое Время» լրագրի մէջ կարդում ենք, թէ ֆինլանդական ընդհանուր նահանգապետը շարունակում է խոսիւ պահանջել, որ ուսուցչ լեզուի գիտութիւնը տարածվի ֆինլանդական դպրոցի մէջ: Այժմ արդէն լէյը-դվարդիայի ֆինլանդական 3-դ բաւարիօնի մէջ ժողոված է ուսուցչ լեզուի ստիպողական ուսումը: Դրան առիթ տուեց այն հանգամանքը, որ երբ գնեւերալներից մէկը, Նուրիսով, ֆինլանդական դպրոցի ըննութիւն և գորահանդէս էր կատարում, տեսաւ, որ ֆինլանդական դիւտրները ամենկին չեն հասկանում ուսուցչ լեզուն:

Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական ֆակուլտետի վերջին կուրսի ուսանողները խնդրեցին՝ դարձանային վերջնական քննութիւններն աշխարհ կատարել:

ԵԻՊՏՈՐԻԱՑԻՑ մեզ գրում են. «Անցեալ օր դպրոցի դահլիճում կայացաւ ժողով: Նոր եւրէջփոխը, իր օգնականի և հաշիւետեսների ներկայութեամբ, ընդունեց Տոյս, երեքդեղական հաշիւները: Նոյն ժողովում մի համակերպի խոդիր ներկայացրին պ. երէջփոխին ծխականների և ժամուրների ստորագրութեամբ: Նկարագրելով, որ իրանք ընթերցանութիւնից բոլորովին դուրկ են (հագրւ երկու օրինակ «Մշակ» է ստացվում), չունեն տեղ, դիրք և այլն, մանաւանդ շատերը ուսուցէն էլ չը գիտեն, որ նորաբաց ժողովրդական դրաղարանից օգտվեն և ապա ժամերը ի դուր չը մեռնեն, ծխականները խնդրում են, որ երէջփոխը թոյլտուութիւն տանալ մի եկեղեցական դրաղարան-ընթերցարան բաց անելու՝ և ի պատիւ Պաշկինի ծննդեան հարկւրամեակի՝ կոչել հայոց եկեղեցական Պաշկինեան դրաղարան-ընթերցարան: Խոդրատները խոստացան հոգալ բոլոր ծախքերը:

Նաւը Պոլիս է գնում, կը տեսնէք 20, 30 կամ աւելի թիւրք ընտանիք, մեծ, փոքր, ծեր, երիտասարդ, տղամարդ և կնիկ, ճիշդ այն հանդերձներով, այն կասկարալով, այն կրտսած ու կարկառած լուացքի տաշտով, ծուռ ու մուռ կապկպած չուալներով և ուրիշ հնարաբան ըուն թիւրք-մոնօպոլական կահարասիներով յետ գնում, ընաղղմած իրանց վերջը նախազգալով, առանց մի քաջ առաջադիմութիւն արած լինելու: Ինչպէս եկել են, այնպէս էլ գնում են: Միայն պատմութեան խոր իմաստասիրութիւնը դուցէ կարողանայ գտնել, թէ այս քաղաքացիցը, Մահմէդի կրօնքով սուրեւանդացած, ինչ դեր ունէր կատարելու, որ կատարեց կամ չը կատարեց և յետ է դառնում: Այսպէս կայ, որ այդ յետ գաղթող թիւրքերը իրանց կալուածքները էժան գնով ծախում գնում են: Երբեմն կարելի է մի ամբողջ գիւղ ծախու առնել և բաւական էժան: Անա ձեզ մի դիւղ, որ ունի 35 տուն և ամենքն էլ միասին ուղում են ծախել և գնալ Թիւրքիա: Մի մարդ ունի 20 հեքտար վարելահող, 16 կով և եղ, 2 ձի, 40 փեթակ, 1/2 զաղաց, 100 ոչխար, 200 պուդ ցորեն, գաւթի և եղիւպիւնի, 150 սալ խոտ և դարձեալ մի տուն երեք սենեակով, մարաղ, ակառ, չուռ-մարան, կառքեր, գութան և այլն, և այս բոլորը տալիս է 1500 ռուբլիով: Մի ուրիշը, դրանից քիչ ունեցող, ուղում է 1,000 ռուբլի: Նւ այսպէս, ամբողջ գիւղ կարելի է առնել, իր բոլոր կարգ ու սարքով, 35—40,000 ռուբլիով: Գիւղը գնալի վրա է, միջով անցնում է խնուղի, երկա-

ՄԵՂՐԻՑԻ մեզ գրում են. «Մշակ» № 30-ի ներքին լուրերի բաժնում հաղորդված էր, որ այստեղ ակցիոներական հասարակական խանութ է բացվում: Այդ լուրը համարում ենք լրատուի ֆանտազիայի արդիւնք: Ճշմարտութիւնը այս է: Մօտաւորապէս երկու ամիս է, որ տեղական երիտասարդներից մի քանիսը խօսում էին գիւղական համայնքի հաշուով հասարակական խանութ բաց անել, բայց մեծամասնութիւնը, անիրադրելի համարելով այդ բանը՝ նպատակադարձար է գտել ընկերական ոյժով տեղացի մի վաճառականի հետ ընկերական առևտրական խանութ բաց անել: Երիտասարդութեան որոշման նպատակը այն է, որ ընկերական խանութ բաց անելով համ հասարակութիւնը կօդալվի, քանի որ մատչելի գներ կը լինեն, համ էլ իրանք:

ԳԵՂՐՈՒ գիւղից մեզ գրում են. «Գէջրլու գիւղում օրվայ հարցը մի կեղծ մուրհակ կազմելու հարցն է: Արմաղուրեի Ասադ Մաշալի Ղասթմ-օղլին կաշառում է Սարդարապատի շինական հասարակութեան տանուտէրին, որ գէջրլուցի է, և մի քանի ուրիշ գրադէտ գէջրլուցիներով: Կազմում են 295 ռուբլու կեղծ մուրհակ քարտիկներից Հաջի Բամազանի ա-նունից՝ որա բացակայութեան ժամանակ, գրում և ստորագրում են հայերէն, իսկ տանուտէրն էլ վաւերացնում է: Այդ յայտնի վաշխառու Ասադը ներկայացնում է մուրհակը հատարաբ դատարանին, բացվում է կեղծիքը: Գործը ըննութեան է յանձնված:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԶԻԱՍՈՅ ՆԱԽԻՐ

Մինչևեւ մի կողմից, ըստ երևոյթին, զինադարի հարցը բոլոր պետութիւնների գրաղ-մունքի առարկայ է դարձել և դիպրօմաները իրանց ձառերը դարձաւում են խաղաղասիրական գեղեցիկ ֆրագներով՝ կողմնակից հանդիսանալով ընդհանուր զինաթափութեան, միւս կողմից իւրաքանչիւր պետութիւն իր պատերազմական ոյժերն է մեծացնում և նոր ուղղական դիւտեր է անում ընդհարման դէպքում գերազանցելու իր արած մարդկային զոհերի քանակութեամբ: Այսպէս, լրագիրները առանձին նշա-նակութիւն են տալիս Յրանսիայում նոր հնարած ջրասող տորպէդաւոր նաւակին, որը հնաբող ճարտարապետի անունով կոչվում է «Gustave Zédé» և որը, նայելով վերջերսում Տուլօնի և Մարսէլլի նաւահանգիստների մէջ արած փոր-ձերին, մեծ յոյսեր է խոստանում թշնամու նաւատորմի դէմ՝ ընդհարման դէպքում: Անա ինչպէս են նկարագրում այդ նոր ուղղական գիւտը:

Փորձառու ճարտարապետ Զէդէի նախագծով, ֆրանսիական ծովային մինիստրութիւնը Տուլօնում շինեց առաջին ուղղական ջրասող նաւակը—«Gymnote», որը, աւարտվելուց յետոյ, 1888 թւին երթարկից փորձի: «Gymnote» սի-դարաձև կազմուածք ունի՝ նա ունի 18 մետր (8 սաժնից աւելի) երկարութիւն և 1,80 մետր

թուղու կայարանից 8 մամ հեռու միայն կլի-ման շատ լաւ: Կառավարութեան կողմից ոչինչ արգելք չը կայ հող առնելու: Նա 3 կտոր հող եւ առե՛լ՝ մէկը՝ 6 հէքտար՝ գիւղ շինելու համար տեղ, Այսօն քաղաքի մօտ՝ 600 ռուբլիով, իսկ արտի տեղ 60 հէքտար՝ 800 ռուբլիով: Մի ուրիշ փոքր ջրովի տեղ, 1 1/2 հէքտար, 130 ռուբլիով, երկա-թուղու կայարանի մօտ: Գիւղ շինելու տեղի մօտ շատ արդեւ կան ծախու: Եթէ մէկն ուզէ Այսոս գնալ և մեզ դրացի լինել, ուր մենք մի որբանոց ենք շինում, ես կը տայի նրան տուն շինելու տեղ 1000 քառակուսի մէտր 10 ռուբ-լիով կամ եթէ աղքատ է՝ ձրի. մեզ լաւ դրա-ցիներ էլ են հարկաւոր:

Մի բան էլ կայ, որ այստեղ ցիւրուցան եղած հայերին, թէ նոր դաղթականներին, թէ նոյն իսկ հին բնիկներին շատ պէտք էր,—է՛ժան, բայց լաւ մտաւոր գրականական սնունդ թէ դրե-րով, թէ լրագիրներով: Մենք ներանում ենք, երբ գալիս մեր ազգը «որսալու»: Բայց շատ էլ մե-դարդելի չէ նրանց արածը: Երբ մենք մեր տան անդամներին սոված ու ծարաւ ենք թողնում և մեր դրացին խոճում է նրանց և մի պատառ հաց է տալիս, թէ նիւթակաւը թէ մտաւորը, ամբէ՛ այդ բանում դրացին է մեղադրելին: Հարկա-ոչ, այլ ընտանիքի այն կարող անդամները, որ իրանց եղբայրների մասին հոգ չեն տանում:

Ա. Ամիրխանեանց

(21/2 արշին) տրամագիծ (ամենալայն տեղում)։ Նրա մէջ կարող է պարունակվել 30 տոնն ջուր։ Նրկու ծայրերում հորիզոնական ուղղութեամբ դրված ղեկերի օգնութեամբ «Gymnote» հեշտութեամբ կարող է սուզվել ջրի տակ և բարձրանալ երեսը, նոյնպէս հորիզոնական դիրք ստանալ, այսինքն կանգնել ցանկացած խորութեան մէջ։ Իսկ ուղղահայեաց ղեկը հնարաւորութիւն է տալիս թեքվել ամեն ուղղութեամբ։ «Gymnote»-ի դրսի կողմը, տակից, բարձր է ընկած մետաղեայ մի ծանրութիւն (ballast), որը ներսի կողմից յատուկ շինված լծակի մի շարժումով կարելի է անջատել նաւակից։ Այդ ծանրութիւնը տալիս է նաւակին նախ հաստատուն դիրք լրացու ժամանակ և երկրորդ, կարևոր դէպքում, երբ յանկարծ կը փչանայ մերձեանքներից մէկն ու մէկը, բաւական է անջատել նաւակից բալաստը ու նաւակը կը սկսի բարձրանալ ջրի երեսը։ Ներսի սենեակներին մէկում դրված է եղբարաւան շարժիչ մեքենան, որն ունի 50—55 ձիու ոյծ։ Ավիւնաւորութիւն մէջ եղած եղբարաւան պաշարը բաւականաւոր է 4—5 ժամկայ լրացու համար, արագութիւնը հաշուով իւրաքանչիւր ժամում—2 ժամ վրա ժողովարարայէս 17 վերստ, իսկ ջրի տակ—14։ Միջի շինուածքը հաշւած է 4—5 մարդու համար, որոնց շինչիւն համար բաւականաչափ օդ կայ սենեակների մէջ և որը կարելի է թարմացնել յաճախ ջրի երեսը բարձրանալիս։ Նաւակը ամբողջապէս ծածկվում է ջրի տակ, մինչև անգամ աննկատելի է մակերևութի վրա լողալիս։ այդ ժամանակ նշմարելի է մի կողը միայն և մի կախարիչ, որը վերցնելիս բացվում է մի կողմից, մարդկանց երթևեկութեան համար։

Այս բոլորից յետոյ «Gymnote»-ին պակասում է էլ մի բան—ամենագլխաւորը—նա կայր է, տեսնել չէ կարող, իսկ նրան հարկաւոր է դիտել թշնամու նաւը և ըստ այնմ յարձակում գործել։ Նրկար փորձերից յետոյ ճարտարագետ Զէ-դէն կանգ առաւ պերիսկոպի վրա, որը և յարմարեցրեց «Gymnote»-ին։

Նաւակի վերի կողմը, կախարիչի մէջ տեղ, թողված է կլոր ծակ, որի մէջ տեղաւորված է 5 մետր երկարութեամբ մետաղեայ, 10 սանտիմետր տրամագիծ ունեցող խողովակ։ Դուրս մը-նայած ծայրը փակ է, իսկ մի կողմի վրա բաց է մէջքի կողմը, որի մէջ տեղաւորված է 1—2 մետր խորութեամբ, խողովակը դուրս են հրում այնքան, որ ջրից մի փոքր բարձրանայ, այդ ժամանակ ծովի վրա եղած առարկաներից լուսաւոր ճառագայթները ընկնում են պերիսկոպի վրա և այնտեղից արտացոլում խողովակի միւս ծայրում դրված հաւաքող ապակու սպիտակ մակարդակի վրա և տեսնելի դարձնում կապիտանին։ Խողովակը շարժվում է իր առանցքի շուրջը և այս կերպով հնարաւոր է դիտել ջրի տակից ծովի մակերես-ւոյթի մեծ տարածութիւն։

«Gymnote»-ի փորձերը դեռ ևս 1888 թինն այնքան աջող եղան, որ ֆրանսիական ծովային մինիստրութիւնը որոշեց շինել նոյն ձևի երկրորդ նաւ, այս անգամ մեծ չափով և ուղղակիան գործիքներով զինված։ Այս վճիռը գործադրվեց Տալուսում և ահա դուրս բերվեց «Sirene» նաւը, որ վերջում կոչվեց «Gustave Zédé»։ Թէպէտ վերջինս պատրաստվեց դեռ ևս տարիներ առաջ, բայց նրա դուրս բերելը ուշացաւ, որովհետև երկար փորձեր ժամանակ փոփոխութիւնների էին ենթարկվում նրա մեխանիզմը և միւս մասերը (դրանց մասին խիստ դժուար է պատկերացնել) և անցած տարվայ վերջը միայն «Gustave Zédé» մտաւ ֆրանսիական նաւատորմի ցուցակի մէջ։

Պարիզ։ «La Nature» հանդիսի ասելով, Zédé նաւի կեղծ շինված է բրոնզից, ունի 40 մետր (19 սանտիմ) երկարութիւն, 3—20 մետր (4 1/2 արշին) տրամագիծ և պարունակում է 266 տոնն ջուր, արագութիւնը ջրի վրա իւրաքանչիւր ժամում հասնում է 24 վերստի, իսկ ջրի տակ—16։ Նա զինված է խողովակաձև գործիքով, որով ար-ձակում է 6 պուղ վառու պարունակող տորպէ-դներ և ընդունակ է սուզվելու ջրի տակ մինչև 9 սանտի խորութիւն՝ 10 նաւատոններով։

Մի քանի ամիս առաջ Գիբրալտի կղզիների մօտ Zédé-ի արած փորձնական յարձակումը պատերազմական մի նաւի վրա այնքան աջող եղաւ, որ ոչ մի կասկած չէ թողնում թէ ինչ տարածութիւն կարող է աղդել թշնամու նաւա-տորմին։ Բացի դրանից, փորձի ժամանակ յայտնի դարձաւ, որ Տուլուզի մինչև Մարսել և Մարսելից մինչև Տուլուզ (աւելի քան 80 ծո-վային մղոն), այն էլ խիստ աշխուշութեամբ մա-մանակ, կարող է անցնել մի անգամ վերցրած պաշարով։ Տեսնալէս վտանգ կարող է պաշտ-պանել ֆրանսիայի ափերը 35 մղոն տարածու-

թեամբ ծովի վրա։ Պէտք է անկայնել և այն, որ այժմ Եւրոպայում շինվում է և շուտով պատրաստ կը լինի նոյնպիսի, բայց մի քիչ փոքր (36 մետր երկարութեամբ, 2,75 մետր տրամագիծով և 146 տոն ջրի ծաւալով) ջրա-տոյղ նաւակը «Morse» անունով։ Բացի դրանից, այժմ ֆրանսիայում հանգանակութիւն «Zédé»-ի երկ-րորդ օրինակը շինելու համար։

Այս բոլորից յետոյ, վերը յիշած նաւակը ու-նի դարձեալ մի պակասութիւն. նա իր ունե-ցած պաշարով չէ կարող բաց ծովը գնալ. և չէ որ այժմեան աշխարհակալ ձգտումներին լու-ինքնապաշտպանութիւնը յագորդ չի տալ, որ-բնին և պէտք է նաւակը ընդունակ դարձնել բաց ծովերը դուրս գալու, յարձակում գործե-լու և աւերածնենք առաջացնելու։ Ահա նա նոյն ֆրանսիացիները այժմ Եւրոպայում շինում են «Narval» մարտանաւը *), որի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ տալիս է Բերլինի «Prometheus»-ը։ Այս նաւը առաջիններից փոքր է (34 մետր երկարութեամբ, 3,75 մետր տրամա-գիծով և 106 տոն ջրի ծաւալով) և տարբերվում է «Zédé»-ից նրանով, որ ունի երկու շարժիչներ, մէկը նաւթի ջրի երեսին լողալու համար 210 ձիւ ունով, միւրը եղբարաւան ջրի տակ լո-ղալու համար։ Նաւթի պաշարը բաւականաց-նում է 600 ծովային մղոն կամ 1050 վերստ ճանապարհ գնալու համար, ժամը 15 վերստի արագութեամբ, իսկ եղբարաւանը—25 ծովա-յին մղոն, 15 վերստի արագութեամբ մի ժա-մում և կամ 70 մղոն 9 վերստի արագութեամբ։ Այսպիսով «Narval»-ը ընդհանուր առմամբ կա-րող է անցնել 1200 վերստ իր ունեցած պա-շարով, հետևապէս իր նաւահանգստից հեռա-րեւել 500 վերստաչափ։ Փախչելու կարելի չէ կայ նրան։ Տէնց որ նկատեց թշնամու, բաւական է կանգնեցնել նաւթի շարժիչը և բաց անել եղբարաւանը, որ սուզվի ջրի տակ և այնտեղից մօտենալով թշնամու նաւին՝ տակից հարուածել իր սուկայի տորպէդներով, ունենալով ընդա-մենը 11 նաւատոններ։ Այս ջրատոյղ նաւը իր կազմուածքով նախ է, ինչ որ միւսները և ջրի տակ սուզվելու համար հարկաւոր է ջուրը ներս թողնել նաւի մէջ, յատուկ շինված աւազանը, իսկ ջրի երեսը բարձրանալու համար ջրհան մեքենաներով դուրս թափել աւազանի ջուրը, հետևապէս նաւի կշիռը քայքայել։ Վերջում աւե-լացնենք և այն, որ ֆրանսիական ծովային մի-նիստրութեան 1899 թվ. ընդգծելով մէջ մտցրած է ծակը «Narval»-ի նման ութ ջրատոյղ տոր-պէդաւոր նաւեր կառուցանելու համար։

Մի անգամից դրանք որ նաւ իր բազմաթիւ գործիքով և մթերքներով ծովերի յատակը իջե-ցնելու համար բաւական է մի «Narval» իր տոր-պէդներով և 8 կամ 10 նաւատոններով։ Ահա թէ որ աստիճանին հասաւ մարդու հնարագի-տութիւնը՝ ոչնչացնելու գործի մէջ։

Ա—Դ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻՍԵՒՑ

Տրապիզոն, մարտի 5-ին

Վերջապէս ունեցանք ներկայացումներ չորս անգամ, որոցմէ մին ցորեկեայ Կը վտանա-նանք ըսել, որ Թիւրքիայի ոչ մի հայաբնակ բա-ղաք Տրապիզոնի նման կարողացաւ անցունել բարեկեանքների շարքով։ Պէտքն ունի էին «ԱՍ անտաւը», «Սուլայի կոմսի ժառանգը» և ըն-բանս աղբար։ առաջին երկուքը կատակա-խառն դրամներ են անհետաքրքիր բովանդակու-թեամբ, իսկ վերջինը իբրեւ կատակերգութիւն կարելի է յաջող համարել։

Ահա բովանդակութիւնը։ Այնցի երկու երիտա-նորդներ, Պոլսէն հայրենիք վերադառնալու ժա-մանակ, միասին բերած են ուսուցիչ մը և կու-ղեն դիւղի դպրոցը անոր յանձնել։ Հաճի աղա-նեքը սաստիկ վիրաւորված այդ երիտանորդ-ներու դրծի խառնվելու յանդիմութեան, նիստ կը կազմեն և կարճ խորհրդակցութեան յետոյ կը վճեն նորեկ ուսուցիչը ճամբու դնել և վերա-դառնալու պահը թափառելու։ Սակայն հարկ կը լինի քննութիւն կատարել, որը պիտի ամենա-զուարճալի մասն է. քննութիւնը կը դառնայ «հաւատով խոստովանիք» մէջ քանի այդ կայի նման հարցերու շուրջը, որոնց ամենին չը կա-րողանալով պատասխանել պոյնցի ուսուցիչը, մեր Նրանոս աղբարը «Լուստուն կեղայ» և կը վերադառնալով պաշտոնին մէջ։ Բայց ժողովը դեռ չը ցրված, դիւղական երիտանորդութիւնը, կանխապաշտպանութեամբ, ժողովարարի դուռը ափ կառնէ աղաղակելով՝ «նոր թաղական, նոր ուսուցիչ կուղենք»։ Հաճի աղաները սարսափած

*) Իրականութեան միւս մասում Թիւրքիայի ջրա-տոյղ ֆրանսիական նաւերը։

Տեսողներ ահա ուղղակի շինեցին, տեղի կը տան և հռչակաւոր ակնաւորները ժողովելով՝ այլ և այլ դուրսեր կը կծկին։

Միտքները եռանդով աշխատած էին և նայե-լով նիւթերու անհնարութեան և իրենց անփոր-ձութեան, շատ յաջող էին. սիրողներէ մասնա-ւոր ուշադրութիւն գրաւեցին Արամ Սարգսն և Սուրէն Տիրատուրեան նորահաս երիտանորդնե-րը՝ իրենց քնական խաղով։ Աւելորդ է ըսել որ ոչ մի կանացի դեր չը կար պիտաներուն մէջ։ Ամեն անգամին ալ հանդիսականներու մեծ բազմութիւն կար։ Նրկարող ներկայացումին Վա-լի Գարոբի պէջ ներկայ էր և նուրբաց 10 ոսկի, իսկ երրորդին՝ ռուսաց հիւպատոսը, երկուքն ալ գոհ մնացին։ Նրեք ներկայացման դուռ հասցիլ-եղաւ մօտ 80 ոսկի, որով այս տարվայ դպրոցա-կան պիտոնէն ապահովեցաւ։

Յերեկեայ ներկայացումը Վարդանանց տօնի-որը տրուեցաւ, չնչին վճարով, մասնաւորապէս աշակերտներու և կիներու համար. դուռ ար-դիւնը ստացվեցաւ 7 ոսկի, որը յատկացվեցաւ աշակերտական «Սանուց» ընկերութեան։

Մեր անցեալ մի նամակով երկու յայտնած էինք թատրոնի հարց յուզվելու առիթով թէ արդեօք ինչ նոր անակնկալներ պիտի ունե-նանք։ Բարեբաղդաբար, այս անգամ և առայժմ անակնկալը պայթեցաւ Մէարիֆի օտար լեզու-ներու քննիչ հայ-կաթոլիկ Միտիչ Բաֆայէան ստորաբարձ արաբաժի պիտին (նախկին ռուս-ցիչ և հռչակաւոր 94—95 թ. «Արեւելք» մէջ հրատարակած մանկալարձական խալտաւակ յո-դուաներով)։ «ԱՍ անտաւը» Մէարիֆի կողմէ յանձնված էր Բաֆայէանի քննութեան. մեր մար-դուկը պիտեայի մէջ սուր, ատրճանակ և մի քանի «միւլիթ» իմաստ ունեցող բառեր՝ արդա-րութիւն, իրաւունք, ինքնապաշտպանութիւն և այլն նկատելով, բոլորովին անպատաս տեղեկա-զիր կը տալ. սակայն Մէարիֆի տեսնել այն-քան բարի կը դառնի, որ կառաջարկէ փոխել այդ կէտերը և կրկին ներկայացնել։ Արտօնու-թիւնը կը ստացվի, տոմսերը կը վաճառվին և յայտարարութիւններ կը ցրվեն. լսանքով Մէա-րիֆի կողմէ հրաման կը գալ, որ այդ խաղը չէ կարելի ներկայացնել, որովհետեւ վալիի թարգ-ման տիմար Անտօն էֆէնդին, Մէարիֆի ներ-կայացած և մեծ իրաւաւորութեամբ, սարսափով նը-կատել տուած էր այդ շատ ծանող արտօնութիւնը պիտի մը, որը իբր թէ վաղուց արդելված է։ Այն երեկոյ միտքը ստիպվեցան միւս կիտա-պատրաստ խաղը ներկայացնել։ Առաջնորդական տեղապահը վալին տեղեկացուց եղբուրթիւնը, որը սաստիկ բարկացաւ, յանդիմանեց Մէարիֆի թեթեմութիւնը և հրամայեց արտօնել։ Բայց Բաֆայէան պրոֆէսօրը (նամակ և այլն կը սիրէ այսպէս ուղղել իրեն) անհանդիստ եղաւ, ուղեց կոտորված ինքնասիրութիւնը գոնէ փոխա-րինել հիւ-հաւատարմական արտայայտութիւ-նով մը, եղաւ աղբարազիր մը գրեց վալին, յայտնելով թէ որչափ որ ձեր վիճակայու-թիւնը բարենաճեցաւ վեհանձնօրէն թեյալարել հայոց ներկայացնել այդ կտորը, բայց ես իբր գրաքննչական թարգման, պիտի չը կարողանամ հանդիսատես գտնել ներկայաւան, (վախ, վախ)։ Սակայն վալին ասպետական տրամադրութեան, աւելի ճիշդը, թէքստ տաճարին հանդիպեցաւ և ի վարձատրութիւն այդ խորին հաւատարմու-թեան հաւատարմին, անմիջապէս արտաքսեց զինքը պաշտօնէն։

Այս մեր ներկայացումներն ալ կատարեալ փորձանք դարձան գրաքննչիներուն 1894-ին, ինչպէս արդէն գրած ենք, հրաժարեցվեցաւ Մի-բայէան էֆէնդին—թէ ևս տարբեր ձևով, այս անգամ ալ պրոֆէսօր Բաֆայէանը «հալը կլլեց»։ Իսկ մարդը շատ ժամանակ սովալուկ թափառել վերջ հաղիւ մի պաշտօն գտած էր, այն ալ ձեռքէն փակաւ անիծեալ հայրու պատ-ճառով։

Այս ընթացքին նայելով, եթէ ամեն տարի մի քանի ներկայացում տալու չարաժամութիւնը ունենանք (և կառավարութիւնը արտօնութիւն տալու բարենտրութիւնը), Տրապիզոնի էֆէնդինե-րի և պրոֆէսօրների որչա խումբը մեղ հետ չը պիտի կրնայ մրցել գրաքննչ-թարգման հասց-նելով։

Տեղացի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԱՍՏԱՆԻՑ

Նոր-Ջուղա, փետրվարի 10-ին

Մեր թեմի առաջնորդ Մաղաբիա եպիսկոպոս Տէրեւեան, իր պաշտօնական այցելութիւնները վերջացած լինելու ձեռք գործի է դարձրել, իր օրհնութեան կոնդալը արդէն որհեք է նոր-կատարի և միւս վիճակները և, որպէս լսում ենք, առանձին նաւակներով դիմում է Կալիֆոռնի-ի Բատալիայի հարուստ հայերին և օգնութիւն է խնդրում թեմի եկեղեցիները պայծառացնելու

և ուսումնարանները աւելի լաւ վիճակի մէջ պա-տելու համար. նա սպասում է քաղաքական պա-տասխաններ և նիւթական առատ նպաստներ ստանալու։

Նոր տարի երեկոյան առաջնորդը մեր «Բաֆ-ֆի ընթերցարանը» պատուեց իր ներկայութեամբ և անդամներին քաղաքեց։ Ջորջ Նէքի օրը առաջին պատարարը մատոյց Վանքի մայր-եկե-ղեցում։ Ներկայ էին, ի միջի այլոց, նաև ռու-սաց հիւպատոսն իր թարգմանի հետ, որոնք մի ժամից յետոյ առաջնորդվեցին առաջնորդարան և մեծարվեցին թէյով և քաղցրեղէններով։

Քանի ժամանակ է, որ այստեղ յարուցվել է քաճանայական հարցը. մի խումբ չարավար-տիւ-րացունքը պատրաստվել են քաճանայանալ, առաջն իմանալու թէ ինչ պաշտօն է այդ և ինչ պիտի լինի իրենց անելը ապագայում։ Սրանցից միւրը դեռ անցեալ տարի զբաղվում էր խոհարա-րութեամբ, երկրորդը խալիֆայ-տիրացու է, որը տարիներից ի վեր իբր թէ ուսուցիչ է եղած, բայց առանց որ և է արդիւնքի, քանի որ եր-կու տող անսխալ հայերէն չէ կարող գրել։ Քա-նի որ ներկայումս հնդկահայերը կրթված և անդ-լիազէտ քաճանանք են պահանջում, մենք խոր-հուրդ կը տայինք սրբազան առաջնորդին ի սէր հնդկահայերի, այդ ապուշներին ճանապարհ ձը-գել, խորհուրդ տալով մի ուրիշ ճիշտ ուղի, որպէս զի թէ իրենց և թէ հայերիս խալտաւակ չանեն օտարների մօտ, քանի որ թէ հնդկահա-յերը և թէ նոյն իսկ տեղիս բոլորեալները բաց աչքերով դիտում են թէ արդեօք ովքեր պիտի լինեն այդ քաճանանքը։ Տեղս գտնե-վում են մի քանի արժանաւոր, ուսեալ և անդ-լիազէտ երիտանորդներ, որոնք կարող են համաճայնվել իրանց նուիրել ազգին և եկեղե-ցուն դիտակցաբար, միայն թէ ապուշ, ան-կիրթ, կոպիտ և բիրտ ընկերներ (ինչպէս որ այժմ գտնվում են պատրաստ ֆարաւան հազ-նեկու և վիճակները յաճախելով ժողովուրդը կո-ղոպեկու)։ չունենան, որոնք իւրաքանչիւր քա-լափով իրենց գործերուն արդեւ կը հանդի-սանան։ Հարկաւոր եմ համարում այստեղ յիշել, որ տեղիս ժողովուրդը մեծամասնութիւնը ան-կիրթ և հետաւար անընդունակ լինելով, երեք-չէ կարող լաւ ընտրութիւն անել արժանաւորի կամ անարժանի մէջ, քաճանայանելու համար կընտրէ և թուղթ կը պատրաստէ մէկի համար այնպիսի արագութեամբ, ինչպէս թէ ընդհիս-պան կամ պահպան (զեաղմա) լինի ընտրում։ Ուրեմն, իմ կարծիքով, թեմական առաջնորդը հաւատար իրաւունք ունի ձեռնադրելու և կամ մերժելու, երբ որ տեսնէ որ ընտրեալը ներկայ պահանջներին երեք-չէ կարող գոհացում տալ, յատկապէս ի նկատի ունենալով այն կէտը, թէ այդպիսիները միշտ այստեղ չեն մնալու, այլ կը ջանան երթալ Կալիֆոռնի, Բատալիայի, Մաղ-բասի և ուրիշ վիճակներ կառավարելու։

Նոր-Ջուղայեցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սերբական լրագիրները հազարգում են, որ սուլթանի հրատարակած հրովարտակը, որով հրամանագրում է վալիներին հակել, որպէս զի այլանցիները ժողովներ և խորհրդակցութիւն-ներ չը կազմեն, ոյծ ունէր միայն երկու-երեք օր։ Այժմ այլանցիները, արձագանք տալով Մուլա-Ջէկիի հրաւերին, կրկին գումարվում են և խորհրդակցում այն բանի մասին, թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնել անհաւատնե-րի դէմ։ Սակայն այլանցիները մի և նոյն ժա-մանակ աշխատում են հանգստացնել սուլթանին և ընդհանր նրան. իւրաքանչիւր ժողովից, իւրաքանչիւր խորհրդակցութիւնից յետոյ հեռա-գրիներ են ուղարկում սուլթանին, յայտնելով իրանց հաւատարմիմ հպատակութեան զգաց-մունքները և ցանկութիւն՝ հաշտ և համաձայն ապրել քրիստոնեաների հետ։

—«Polit. Corr.» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հազարգում է, որ սուլթանը մի թաւալով վա-զա ուղարկեց ընծայ լորդ Սուլթիլիին։ Ար-տաստելով այդ լորդը «Standard» լրագրը նը-կատում է, թէ սուլթանը սուլթը է իր բարենա-ճութիւնը յայտնել ընծաներով։ Պալատում և Բ. Դրան մէջ այժմ առաջվանից աւելի լաւ են վերաբերվում դէպի Անգլիան։

—Ներկայ տարվայ ապրիլին Հռոմում կայա-նալը ժուրնալիստների միջազգային կոնգրէ-սի պատաւոր նախագահ կը լինի իտալական միւնիստր Վիսկոնտի-Վենետուս, իսկ կոնգրէսի դրական ղեկավարը կը լինի—պ. Բոնֆաւինի։

—Կ. Պօլսի «Temps» լրագրին հեռագրում են. «Այն հրաւերը, որ ուղարկել է սուլթանը Ուէլսի պրինցին Աթլենցից յետոյ Կ. Պօլս գալ համարվում է նշան այն բանի, որ սուլթանը համաձայն է ընդունել իբրեւ նոր դրութիւնը Կրետէում։ Առում են, որ արքայորդի Գեօրգի Կրետէից նոյնպէս Կ. Պօլս կը գալ՝ ողջունելու սուլթանին, որպէս իր սիւզլէրնին։

—Կրետէ հասաւ յունաց «Mikale» վիւնդա-կան նաւը փայտի ահազին բեռներով՝ մասմէ-տականների համար տներ կառուցանելու նպա-

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.